# ԽՈՐՀՐԴԱ
# ՏԵՏՐ
# ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱ
# ՐԱԳԻ

Ըստ Աւանդութե
Եկեղեցեաց Հայաս
տանեայց ։

Ի Թուականութեանս
Հայոց ռմղ յուլի՛ Իա ։

Ի Տպարանի Յօհաննիսի և Պօղոսի
Ի Կոստանդնու պօլիս քաղաքի

ՀՍՍՌ ԳԱ
ՀՆՏԵՐԳ ԵՎ

Օրէնք օրհնելոյ սպաս եկեղեցւոյ. Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել:

Պարտի այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ:

Մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն ուր զգեստքն են պատարագի:

Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի:

Ասասցեն ապա. Սաղմոս ճլա Ացորդ:

ՔԱՀԱՆԱյք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն. փոխ:

Յիշեա՛ տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ տեառն. եւ ուխտ եդ Աստուծոյ Յակոբայ:

Թէ մտից ի յարկս տան իմոյ. թէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտեւանանց իմոց. կամ հանգիստ քունքաց իմոց. մինչեւ գտից տեղի յարկի տեառն Աստուծոյ Յակոբայ:

Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ. եւ գտաք զնա ի դաշտս մայրեաց:

Մտցուք ի յարկս նորա. երկիրպագցուք ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա:

Արի՛ տէր ի հանգիստ քո դու եւ տապանակ կտակի սրբութեան քո:

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն Դաւթի ծառայի քո. մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

Երդուաւ տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

Թէ պահեսցեն որդիք քո զուխտս իմ եւ զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Որդիք

Որդիք նոցա նստցին յա
ւ՛իտեանս յաւ՛իտենից
յաթոռ քոյ:

Հաճեցաւ տէր ընդ սիոն.
և ընտրեաց բնակել 'ի նը
մա. ասէ այս է՛ հանգիստ
իմ յաւ՛իտեանս յաւ՛իտե
նից. 'ի սմա բնակեցայց
զի հաճեցայ ընդ սա:

Զայրիս սորա օրհնելով
օրհնեցից. և զաղքատս
սորա լցուցից հացի՛:

Քահանայից սորա զգե-
ցուցից զփրկութիւն. և
սուրբք սորա ցնծալով
ցնծասցեն:

Անդ ծագեցից եղջիւր
'ի դաւ՛իթ. պատրաստ ա-
րարից ճրագ օծելոյ իմոյ:

Թշնամեաց սորա զգեցու
ցից ամօթ. և 'ի վերայ
նորա ծաղկեսցի սրբու-
թիւն իմ:

Փառք հօր և Որդւոյ և
Հոգւոյն Սրբոյ. Ամ″:

Եւ քարոզեսցէ Սարկաւագն:

Եւ ևս խաղաղութե՛ զտէր
աղաչեսցուք:

Խնդրեսցուք Հաւա-
տով միաբանութե՛ 'ի տնէ,

Զի զողորմութեան ըզ
շնորհս իւր արասցէ 'ի
վերայ մեր:

Ամենակալ տէր ած մեր,
Կեցուսցէ Եւ ողոր″:

Եւ Ասասցեն Երկրպագութեամբ
Տ՟ր ողորմեայ:

Ո՛վ սրբազան պատա-
րագիչ Յիշեա՛ Յաղօթս
Քոյս Զմատակարար
Գործարանիս:
Եւ զհոգիս Ննջեցելոց
նորին 'ի Քս̃ Յս̃:


ՅՆԹՀ

Աղօթք Սրբանձնական Պատարագիչ Քահանային Յառաջ քան Զզգեստաւորիլն :

ՈՐ ԶԳԵՑԵԱԼ ԵՍ ԶԼՈՅՍ ՈՐՊԷՍ հանդերձ Տէր մեր Յ̃ս Ք̃ս : Անճառելի խոնարհութեամբ յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար : Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի եւ զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ : Տ̃ր ամենակալ որ պարգեւեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ : Արժանի արա եւ զիս ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո : Որ համարձակեմ եւ մերձենամ ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց քոց : Ո̃պ զի զա̃մ ամբարշտութ̃ս մերկացայց որ է հանդերձ պղծութեան եւ զարդարեցայց լուսով քով · ընկեա յինէն զչարիս իմ, եւ թօթափեա զյանցանս իմ : Ո̃պ զի արժանի եղէց հանդերձելոյ լուսոյդ առ ի քէն : Շնորհեա ինձ քահանայական

Բ ա փա

փառօք մտանել 'ի պաշտօն սրբութեանց քոց, ընդ այնոսիկ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո։ Զի և ես պատրաստ գըտայց երկնաւոր առագաստիդ ընդ իմաստուն կուսանսն. փառաւորել զքեզ Քս որ բարձեր զմեղս ամենեցուն։ Զի դու ես սրբութիւն անձանց մերոց և քեզ բարերարիդ ձյ վայելէ փառք իշխա"։

Եւ մատուցեալ Սարկաւագունքն՝ Զգեցուսցեն նմա զհանդերձն ասելով. Եւ ես խաղաղութեան։ Քահանայն Օրհնութիւն։ Եւ յետ օրհնութեան՝ դիցէ յառաջ զխոյրն 'ի գլուխն և ասասցէ։

# ԴԻՐ ՏԷՐ

սաղաւարտ փրկութեանն 'ի գլուխ իմ, պատերազմել ընդ զօրութիւս թշնամեացն։ Շնորհօք տն մերոյ յի քի որում վայել"։

Շապիկն։

Զգեցո տէր ինձ հանդերձ փրկութեան։ և պատմուճան ուրախութեան։ Եւ շուրջ պատեա զգեստով փրկութեան։ Շնորհօք։

Փոր Ուրարն։

Զգեցո տէր պարանոցի իմոյ զարդարութիւն։ Եւ սըրբեա զսիրտ իմ յամ աղտեղուէ մեղաց։ Շնորհօք։

Գօտին։

Շուրջ պատեա զիս կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ և մտացս։ Եւ շիջուսցէ 'ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս։ Եւ զօրութիւն շնորհաց քոց յամ ժամ բնակեսցէ 'ի սոսա։ Շնոր"։

Բազպան յաջ ձեռին։

Տուր տր զօրութիւն յաջոյ ձեռին իմոյ, և լուա զամ աղտեղութիւնս իմ։ Զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Շնորհօք։

Բազպան յահեակ ձեռին։

Տո՛ւր տր զօրութի՛ւն ձախոյ ձեռին իմոյ, և լուա՛ զամ աղտեղութիւնս իմ։ Որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութբ հոգւոյ և մարմնոյ։ Շնոր"

Վակասին։

Օձեա՛ տէր պարանոցի իմոյ զարդարութի՛ւն։ Եւ՛ սրբեա՛ զսիրտ իմ յամ աղտեղութէ մեղաց։ Շնորհօք։

Նափորտին որ է շուրջառ։

ՏՐ ողորմութբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ և պատրաստեա՛ ընդ դէմ ներգործութե չարին։ Զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ։ Շնորհօք։

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուքն ասէ։

Ցնծասցէ անձն իմ՛ ի տր զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե և պատմուճան ուրախութե. իբրև փեսայի եդ ինձ պսակ. և որպ զհարսն զարդու զարդարեաց զիս։ Շնորհօք։

Թաշկինակին։

Սրբեա՛ տէր զձեռս իմ յամ աղտեղութէ մեղաց։ Շնորհօք տն մերոյ յի քի։

Եւ՛ յետոյ եկեղեցեն առաջի դրբյ սեղանոյն։ Եւ՛ քահանայն լուայէ զձեռս ասելով։ Սաղմոս. ԻԵ. կց։

Լուացից սրբութբ զձեռս։

Սարկաւագն փոխ.

Դատ արա ինձ տէր զի ես անմեղու"։

Քահանայն։

Եւ՛ մտ սրբութեայ տծա։

Սարկաւագն։

Սբ զածածինն և զամենայն սբս բարե"։

Քահանայն։

Ընկալ տր զաղաչանս մեր։

Խոստովանիմ առաջի այ և սրբուհւոյ ածածնին. և առաջի ամ սբց. և առաջի ձեր հարք և եղբարք զամ մեղս զորս գործեալ եմ, Քանզի մեղայ խորհրդով բանիւ, և գործով. Եւ՛

ա̃մ մեղջք զոր գործեն մար
դիկք: Մեղայ, մեղայ:
Աղաչեմ զձեզ խնդրե
ցէք վ̃ս իմ յա̃յ զթողութի̃:

Պատասխանեսցեն որք մերձն են։

Ողորմեսցի քեզ ա̃ծ հզօրն
և թողութի̃ շնորհեսցէ
ա̃մ յանցանաց քոց, ան
ցելոյն և այժմուս, և յա
ռաջիկայէն փրկեսցէ և
հաստատեսցէ յա̃մ գործս
բարիս: Եւ հանգուսցէ
զքեզ 'ի հանդերձեալ
կեանսն. Ամէն:

Պատասխանեսցէ և նոցն։

Ազատեսցէ և զձեզ մար
դասէրն ա̃ծ, և թողցէ
զա̃մ յանցանս ձեր. տացէ
ժամանակ ապաշխարելոյ
և գործելոյ զբարիս. ուղ
ղեսցէ եւ զառաջիկայ
կեանս ձեր շնորհօք ս̃բ
հոգւոյն հզօրն և ողոր
մածն և նմա փառք յա
ւիտեանս ամէն:



Դպիրքն.

Յիշեսջիր զմեզ առաջի անմահ գառին ա̃յ։

Քահանայն։

Յիշեալ լիջիք առաջի
անմահ Գառին ա̃յ:

Դպիրքն։ Սաղմոս. ՂԹ. փոխ։
Աղաղակեցէք առ տ̃ր ա̃մ երկիր ծա"։

Սարկաւագն Քարոզէ։
Ս̃բ եկեղեցեաւս աղաչեսցուք զտէր։

Քահանայն։

Ի մէջ տաճարիս և առաջի
ա̃ծընկալ և պայծառացեալ
ս̃բ նշանաւս և ս̃բ տեղւոյս
խոնարհեալ երկիւղիւ եր
կրպագանեմք ս̃բ և զհրա
շալի և զյաղթող զյարութի̃
քո փառաւորեմք. և քեզ
մատուցանեմք զօրհնութի̃
և զփառս ընդ հօր և ընդ
հոգւոյդ ս̃բյ այժմ և":

Քահանայն ասասցէ սաղմոս. ԽԲ. կցորդ։
Եւ ելցէ 'ի խորանն։

Մտից առաջի սեղանոյ:

Սարկաւագն փոխ։
Դատ արա ինձ ա̃ծ իմ և իրաւ արա ինձ"։

Սարկաւագն քարոզէ։
Եւ ևս խաղաղութեան զտէր աղա"։

Օրհ

Օրհնեսցուք զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ արժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջս փառաբանութեան և երգել զերգս հոգևորս. Ամէն:

Քահանայն:

Ի յարկի սրբութեան և ՚ի տեղւոջս փառաբանութեան. հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ և զհրաշալի և զյաղթող զօրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ ընդ երկնային զօրան մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Իսկ եթէ եպիսկոպոս լինիցի խորհրդածուն՝ ասիցէ ՚ի վերայ լանջացն զպատուական եմիփորոնն: Եւ մատուցեալ առ ընծայարան սեղանոյն: Եւ ՚ի ծունկս անկեալ յորդահոս արտասուօք լուռ և անմռունչ ասասցէ զաղօթս առ սուրբ Հոգին անօրինիչ գործոյն:

Գրիգորի Նարեկացւոյն:

ԱՄԵՆԱկալ բարերար մարդասէր Աստուած բոլորից, յօրինօղ երևութից և աներևութից, փրկօղ և հաստատօղ, խնամօղ և խաղաղարար, հօր հզօր հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան յանդիման եղեալ քեզ ահաւորիդ: Մատչիմք մեծաւ դողութբ՝ սաստիկ երկիւղիւ՝ մատուցանել. նախ զբանական զայս պատարագ՝ քում անզննին զօրութեդ, իբր

Իբր աթոռակցի փառակ-
ցի և արարչակցի՝ Հայրե-
նի անկապուտ պատուոյդ,
և քննողի ծածկութեան
խորոց խորհրդոց ամենա-
կատար կամաց Հօրդ Էմմա-
նուէլդ՝ զքեզ առաքչի,
փրկչի և կենդանատուի և
արարչի մերի: Ի ձեռն քո
ծանուցաւ մեզ երրեակ
անձնաւորութիւն միա-
նական ածութեան, յորոց
մի և դու ճանաչիս անհաս:
Քեւ և ի ձեռն քո ա-
ռաջինքն նահապետական
տոհմին շառաւիղք՝ տե-
սանօղք անճառ անկոչեալք,
պանծացեալն և զգալոյսն,
զեղեալն և զոչ գոյացեա-
լն, անբաւերաբար բար-
բառով բանի մերապատ-
մեցին:

Հոգի այ քարոզեալ ընդ
քեզ մովսէսի, որ ի գը-
նալն քո ի վերայ ջրոցն՝
անպարագիր զօրութիւն,
ահեղ շրջարկուք տածո-
ղականաւ՝ թևապարփակ
պաշտպանողօրէն գթաւ-
րեալ ի ծնունդս նորոգս՝
զաւազանին խորհուրդ
ծանուցեր:

Յոր կերպարան օրինակու-
թեան՝ նախ քան զկառու-
ցանել զլոյծդ մածուած
վերջնում վարագուրիդ՝
յօրինեցեր կարօղ տիրա-
պէս զբովանդակ բնուս
ամենից բնաւից բոլորից
գոյից այժմ էից՝ յանէից:
Քեւ ստեղծանին ի նո-
րոգումն յարութե ամ եղել
քրս առ ի քէն՝ յայնմ
ժամանակի, որ է օր վեր-
ջին՝ այսմ կենցաղի, և օր
առաջին՝ երկրին կենդա-
նեաց: Քեզ հնազանդե-
ցաւ միութբ կամացն՝ որդ
հօրն իւրում, ազգակիցն
քո՝ էակիցն հօր՝ անդրա-
նիկն

նիկն ոգի․ մերովս կեր-
պիւ ընդ քեզ աւետարա-
նեալ ճշմարիտ ա̃ծ՝ հա-
ւասար և համագոյ հօր
իւր հզօրի․ և զառ 'ի քեզ
հայհոյութիւնն անքաւե-
լի քարոզեաց, և իբր
զա̃ծ անմարմնոյն զքո հես-
տելոյն՝ չարաբանական
բերանս կարկեաց, եւ
զիւրն շնորհեաց՝ արդարն
և անարատն՝ գտիչն ա̃մի․
որ վասն մեղաց մերոց մատ-
նեցաւ, և յարեաւ վասն
զմեզ արդարացուցանելոյ։
Նմա փառք 'ի ձեռն քո,
և քեզ բարեբանութիւն
ընդ հօր ամենակալի
յաւիտեանս յա-
ւիտենից․
Ամէն։



Դարձեալ կրկնեցից 'ի նոյն կարգ բանի, մինչև վստահութիւն վերահայեցողութե̃ լուսոյ՝ հրաշապէս յայտնեսցի։ Ազդեալ աւետարանեալ վերստին կրկնեն զխաղաղութիւն։

# ԱՂԱՉԵՄՔ

և աղերսեմք աս
տուածալից հա-
ւաչմամբ յա̃մ անձնէ՛ ընդ
փառաւորեալ արարչու-
թիւնդ՝ անեղծ և անբա-
ւեղծ անժամանակ հո-
գւոյդ գթածի, որ բարե-
խօսդ ես վասն մեր յան-
մռունչ հեծութ̃եա՝ առ
ողորմածդ հայր․ որ զբան
պահես, և զմեղուցեալսն
մաքրես՝ և տաճարս կազ-
մես կենդանի և կեցու-
ցիչ կամաց բարձրելոյդ
հօր։ Արդ՝ ազատեա՛ ընդ
մեզ յա̃մ անմաքուր գոր-
ծոյ, որ ոչ է հաճոյ քումդ
բնակութե̃․ և մի՛ շիջցեն
առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնոր-
հաց փայլմունք 'ի տեսակս
նոցա

Ը

Նոցա աչաց խնամոտից. վն
զի զքեզ ուսաք միայն
'ի մեզ 'ի ձեռն աղօթից,
և ընտիր վարուց խնկելոց:
Ար՛ քանզի մինչ յերրոր-
դութենէդ պատարագիս,
և միւսոյ ընդունիս հա-
ճեալ ընդ մեզ հաշտարար
արեամբ անդրանկին իւրոյ.
իսկ դու ընկալցիս ըզմեր
պաղատանս, և յարդարես-
ցես զմեզ օթևանս պատ-
ուականս ամ պատրաս-
տութեամբ՝ 'ի վայելումն
ճաշակման երկնաւոր գա-
ռինդ, առանց պատժոյ
դատապարտութե՝ ընդունիլ
զայս անմահացուցիչ մանա
նայս կենաց նորոյ փրկութե:
Ար՛ հալեսցի 'ի հրոյս յայս
մանկէ գայթակղութիս մեր,
որք մարգարէին կենդա-
նախարոյկ կայծակամբն՝
'ի ձեռն ունելեացն մա-
տուցման. զի յանմ քոյդ քա

րոզեսցի զգթութին, որպէս
որդւոյդ ոյ հօր քաղց-
րութն. որ զանազան որ
դին մերձեցոյց 'ի հայրե-
նի ժառանգութիւնն, և
զպոռնիկան յառաջեցոյց
յերկնային արքայութին՝
արդարոցն երանութե:
Այո՛՝ այո՛՝ և ես մի եմ
'ի նոցանէ. և զիս ընկալ
ընդ նոսին իբր մարդասի-
րութե կարօտեալ մեծի,
շնորհօք քո ապրեալ, զա-
րեամբ քն սոսայեալս:
Ոչ յայն ամ՝ յամի ծա-
նիցի քո՛ ածութին՝ ընդ
հօր փառաւորեալ համա-
պատուաբար 'ի մի կամս,
և 'ի մի իշխանութիւն
գովութեան:

'ի Զոյն:

Ոչ քո՛ է գթութի, և
կարողութի, և մարդա-
սիրութի, զօրութիւն և
փառք յաւիտեանս յաւի-
տենից. Ամէն:

Այս յարուցեալ գոյ առ ընծայարան սեղանոյն։ Եւ որ մատուցանէ նախասարկաւագն զնշխարն։

Զոր առեալ քահանայն դնէ ՚ի մաղզմայն ասելով։

Յիշատակ անուան մերոյ Քրիստոսի քո։ Որ բազմեալ հանգչիս յանարուեստ աթոռ. զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան. օրհնեցէք՝ գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Եւ առեալ զգինին՝ արկանէ խաչանիշ ՚ի սկիհն ասելով։

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որ ՚ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք և անմահացան. օրհնեցէք՝ գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Եւ ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ Յօհաննու Ոսկեբերանին։

Տէր Աստուած մեր որ զերկնաւոր հացդ զտէրն մեր Յիսուս Քրիստոս զկերակուրն ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար՝ ☞ օրհնել և սրբել զմեզ. Ինքնին դու Տէր ☞ օրհնեա և այժմ զառաջադրութիւնս զայս։ Ընկալ զսա յերկնային քո սեղանդ։ Յիշեա որպէս բարերար և մարդասէր զմատուցողս և վասն որոց մատուցանի։ Եւ զմեզ անդատապարտ պահեա ՚ի քահանայագործութեան աստուածային խորհրդոց քոց։ Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ այժմ և։

Եւ պտղեսցէ ասելով. Սաղմոս. ՂԲ։

Տէր թագաւ։ Հաստատ։ Ամբարձան։ ՚Ի ձայնէ։ Սքանչելի։ Տան քում։

Եւ

Եւ խաչակնքեսցէ երիցս ասելով:

Հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո:

Եւ արկանէ զխունկն ասելով:

Խունկ մատուցանեմ առաջի քոյ Քրիստոս բուրումն հոգևորական: Ընկալ ՚ի սուրբ յերկնային և յիմանալի քո մատուցարանդ ՚ի հոտ անուշից: Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս և զպարգևս Հոգւոյդ սրբոյ. և քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ այժմ″:

Եւ ապա խնկելով ՚ի մէջ եկեղեցւոյն և ջամբէ հանդերձ սարկաւագօքն, և ելեալ ՚ի վեր երիցս երկրպագեսցէ զսեղանն: Եւ նախասարկաւագն ՚ի մէջ եկեղեցւոյ կալով ձայնեսցէ:

Օրհնեա տէր:

Եւ քահանայն ՚ի ձայն ասասցէ:

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և″:

Եւ սկսանին դպիրքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն: Եւ յաւարտելն ձայնեսցէ նախասարկաւագն: Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք ըն″: Օրհնեա տէր:

Եւ քահանայն ասասցէ:

Օրհնութիւն և փառք Հօր և″ Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրն.

Եւ ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն.

Աստուծոյ երկրպագեսցուք.

Դպիրն.

Առաջի քո տէր.

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն:

Տէր Աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննելի է. և փառքդ անհասանելի: Որոյ ողորմութիւնդ անչափ է. և գթութիւնդ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում նայեաց ՚ի ժողովուրդս քո՝ և ՚ի տաճարս այս սուրբ: Եւ արա ընդ մեզ և ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն քո և զգթութիւն: Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յա″: Եւ

Եւ սկսանին սաղ դպիրքն սաղմոս և շարական ըստ պատշաճին ։

Եւ մինչ նոքա երգեն, Քահանայն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ ։

ՏԷՐ ած մեր կեցո զժողովուրդս քո․ և օրհնեա զժառանգութիւնս քո․ զլրումն եկեղեցւոյ քո պահեա․ սրբեա զսոսա որք սիրեն զվայելչութիւն տան քո։ Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով․ և մի թողուր զյուսացեալս 'ի քեզ ։ Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւ″ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն՝ ուսուցեր աղօթել. և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար։ Դու և այժմ զծառայից քոց զխնդրուածս առ 'ի յօգուտ կատարեա ։

Շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեան։ Եւ 'ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգևելով։ Զի բարերար և մարդասէր ես ած․ և քեզ վայելէ փառք իշ″ ։

Եւ 'ի փառք տաղն դպրաց, երկիրպագցեն առաջի բեմին ամենեքեան ։

Եւ քահանայն երկրպագելով սեղանոյն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ ։

ՏԷՐ ած մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի զսպասաւորութի փառաց քոց։ Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց․ և լինել պաշտօնակից մեզ՝ և փառաբանակից քում բարերարութեանդ ։

'ի Ձայն։

Զի քո է կարողութի, և զօրութի, և փառք յաւիտեանս ։

Ամէն ։

Եւ համբուրեսցեն զսեղանն։ և սարկաւագունքն գոչեսցեն։

Պրօսխումէ։

Եւ սարկաւագս մի ոմն բարձրացու-
ցանէ զաւետարանն ՏԷ։

Եւ դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն եր-
գեն զերեք սրբեանն։

Սբ ածն սբ և հզօր սբ և անմահ որ խա-
չեցար և այլն։

Եւ քահանայն զոյգ ամէն ասասցէ։

Ի ծածուկ։

ԱԾ սբ՝ որ ի սբս հան-
գուցեալ ես, և երեք սր-
բեան ձայնիւ սերովբէք
զօրհնեն զքեզ՝ և քերովբէք
փառաբանեն. և ամ երկ-
նային զօրութիւնք՝ քեզ
երկրպագանեն։ Որ ի չգո-
յէ ի գոյ ածեր զամ ա-
րարածս. որ արարեր զմար-
դն ըստ պատկերի քում
և նմանութն. և ամ շնոր-
հիւ քով զնա զարդարե-
ցեր. և ուսուցեր խնդրել
զիմաստութի և զգօնութի։
Եւ ոչ անտես արարեր
զմեղուցեալն այլ եդեր

Գ

ի վերայ նր ապաշխարու-
թն փրկութն։ Որ արժա-
նի արարեր զմեզ զխոնա-
սայեալ և զանարժան ծա-
ռայս քո ի ժամուս յայս-
միկ, կալ առաջի փառաց
սրբութն սեղանոյ քոյ։
Եւ զօրհնաւոր երկրպա-
գութի և զփառաբանու-
թիւն մատուցանել քեզ։
Դու տր՝ ընկալ ի բերա-
նոյ մեղաւորացս զերեք-
սրբեան օրհնութիս. և պա-
հեա՛ զմեզ քոյին քաղցրու-
թբդ. թող մեզ զամ յան-
ցանս մեր զկամոյ և զակա-
մոյ։ Սրբեա՛ զհոգի՝ զմի-
տս՝ և զմարմինս մեր. և
շնորհեա՛ ի սրբութն պաշ-
տել զքեզ զամ աւուրս
կենաց մերոց։ Բարեխօ-
սութբ սրբուհւոյ ածած-
նին և ամ սրց քոց՝ որք յա-
ւիտենից քեզ բարեհա-
ճոյեցան։ Զի սբ ես տր

ած

ած մեր. և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ այժմ և միշտ և յա՞:

Եւ ՚ի կատարել երեք օրհնոյն և աղօթիցն՝ սարկաւագն քարոզէ:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա՞.
Վ՞ս խաղաղութեան ամենայն աշ՞.

Եւ քահանայն՝ բազկատարած ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ:

Տր ած մեր՝ զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վեր ընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութե՞ քում: Զգթութի քո առաքեա ՚ի վերայ մեր և ամ ժողովրդեանս՝ որք ակն ունին առ ՚ի քէն առատ ողորմութեանց:

Սարկաւագն ձայնեսցէ:

Օրհնեա տէր.

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն:

Զի ողորմած և մարդասէր ես ած գոլով և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ այժմ և՞:

Ա

Յետ այսորիկ՝ երկրպագէ սեղանոյն քահանայն, և ելեալ բազմի յաթոռն. և սկսանին դպիրքն սաղմոս ըստ խորհրդոյ աւուրն:

Եւ ընթերցին զգիրս մարգարէականս և զառաքելականս:

Եւ զկնի ալէլուիայ, ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն. և յաւարտմանն:

Սարկաւագն ձայնեսցէ:

Օրթի:

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով:

Խաղաղութի ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն.

Երկիւղածութեամբ լուարուք.

Սարկաւագն.

Սուրբ Աւետարանիս Որ ըստ Մատթէոսի.

Դպիրքն.

Փառք քեզ տէր ած մեր.

Սարկաւագն.

Պռօսխումէ.

Դպիրքն.

Ասէ Աստուած.

Եւ Սարկաւագն ընթերցի: Զաւետարանն Սուրբ. Եւ յաւարտմանն ասասցեն Ամենեքեան:

Փառք քեզ տէր ած մեր:

Եւ ապա ասեն զնիկիական դաւանութիւն ՚ի լման:

Ժա

ՀԱՒԱՏԱՄՔ ի մի Աստուած Հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ՝ լոյս ի լուսոյ՝ Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։

Նոյն ինքն ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։

Որով էառ մարմին հոգի և միտ. և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ խաչեալ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ի դատել զկենդանիս և զմեռեալս։

Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն։

Որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։

Որ էջն ի Յորդանան քարոզեաց զառաքեալսն, եւ բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի։

Ի

'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն, և 'ի Թողութիւն մեղաց:

'Ի յարութիւն մեռելոց:

'Ի դատաստանն յաւիտենից: Հոգւոց և մարմնոց յարքայութիւնն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդին. կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ հոգին. կամ թէ յոչ էից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ. և կամ զսուրբ հոգին և թէ փոփոխելիք են կամ այլայելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

Լուսաւորչին ասացեալ:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագանելով սուրբ երրորդութեան և մի աստուածութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և՛:



Սարկաւագն քարոզէ 'ի ձայն:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա՛:

Դպիրքն տէր ողորմեա:

Եւ ևս հաւատով աղաչես՛:

Մինչ նոքա երգեն, քահանայն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ:

Տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս որ մեծ ես ողորմութեամբ, և առատ պարգևօք բարերարութեան քո: Որ դու քո կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չար չարչարանաց խաչի և մահու յաղագս մեղաց մերոց: Եւ պարգևեցեր առատապէս զպարգևս հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս արա և զմեզ տէր աղաչեմք զքեզ աստուածային պարգևացդ. Թողութեան մեղաց՝ և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ:

'Ի ձայն:

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և սուրբ հո՛:

Խա

Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութբ քով քս փրկիչ մեր՝ որ ՚ի վեր ես քան զամ միտս և զբանս։ Ամրացո զմեզ և աներկիւղ պահեա յամ չարէ. հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո՛ որք հոգւով և ճշմարտութբ քեզ երկրպագանեն. զի զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք իշխա″։

Օրհնեալ տր մեր յս քս Ամէն։

Սարկաւագն.

Օրհնեա տէր.

Քահանայն խաչակնքէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով ՚ի Ձայն։

Տր ամ օրհնեսցէ զա″։

Յետ այսորիկ՝ եթէ եպիսկոպոս իցէ ՚ի բաց հանցէ զեմիփորոնն։

Սարկաւագն։

Սաղմոս ասացէք տեառն այ մե″.

Դպիրքն ասեն զսրբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն։

Սարկաւագն.

Մի՛ ոք յերախայից.

Դպիրքն.

Մարմին տէրունական.

Ն

Եւ զայն խնկարկելով ՚ի սուրբ խորհուրդն։

Սարկաւագն։

Յարևու եհար զխո″։

Դպիրքն.

Եւ ցնծա նա որպէս հր″։

Եւ ապա եղանակեսցեն։

Որ զքերոբէիցն.

Եւ ապա Սարկաւագացն վերաբերեսցի սրբազան հացն՝ և ամփոփութբ բաժակն ՚ի սբ սեղանն։ Եւ մինչ նոքա երգեն՝ քահանայն խոնարհեսցի առաջի սբյ սեղանոյն և խորհրդաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Ոչ ոք արժանի է յամբոխելոյս մարմնաւոր ախտիւք և ցանկութբ մատչել ՚ի սեղան քո. կամ պաշտաւոնել արքունական փառաց քոց։ Քանզի պաշտել զքեզ մծ և ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է։ Սակայն վսն անչափ բարերարութե քո՝ անպատմելի բանդ Հօր եղեր մարդ՝ և քահանայապետ մեր երևեցար։ Եւ իբր տր ամցուն այսմ պաշտաւոնէ՝ և անարիւն զենման՝ զքահանայութիւն

աւան

աւանդեցեր մեզ ։
Վ՟ զի դու ես տէր Ա՟ծ
մեր որ տիրես երկնաւորաց
և երկրաւորաց ։ Որ ՚ի
վ՟ր քերովբէական աթոռոյ
բազմիս․ սերովբէից տ՟ր և
թագաւոր Ի՟էլի ։ Որ միայն
ս՟բ ես և ՚ի ս՟բս հանգուցեալ ։
Աղաչեմ զքեզ միայն բա-
րերար և հեշտալուր․ նայ-
եա՛ց յիս ՚ի մեղուցեալ և
յանպիտան ծառայս քո՛ ։
Եւ սրբեա՛ զհոգի և զմ-
տիս իմ յամ՟ պղծութե՟
չարին ։ Եւ բաւականացո՛
զիս զօրութ՟բ ս՟բ հոգւոյդ
որ զգեցեալ եմ զքահա-
նայականս շնորհ, կալ ա-
ռաջի սրբոյ սեղանոյս և
քահանայագործել զքո՛ ա-
նարատ մարմինդ և զպատ-
ուական արիւնդ ։ Քեզ
խոնարհեցուցեալ զպարա-
նոցս իմ, աղաչեմ․ մի՛ դար-
ձուցաներ զերեսս քո՛ յի-

Օ

նէն․ և մի՛ մերժեր զիս ՚ի
ծառայից քոց ։ Արդ ար-
ժանի արա՛ մատուցանել
քեզ զընծայս զայս յինէն
՚ի մեղուցեալ և յանար-
ժան ծառայէս քումմէ ։
Վ՟ զի դու ես որ մատու-
ցանես՝ և մատչիս՝ և ընդ-
ունիս, և տաս ք՟ս Ա՟ծ մեր ։
Եւ քեզ փառս մատուցա-
նեմք հանդերձ անսկզբն
ըն՟ քո՛ հարբդ և ամե-
նասուրբ և բարե-
րար հոգւովդ․
այժմ և միշտ
և յաւի՟ ։

Եւ ընծայքն վերաբերին ՚ի սեղանն ։

Եւ քահանայն խնկեսցէ և լուասցէ ըզ
մատունսն ասելով ։

Լուացից սրբութ՟բ զձեռս ։

Սարկաւագն ։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղ՟ ։
Եւ ևս հաւատով և սրբու՟ ։

Մինչ նոքա քարոզեն․ Քահանայն բազ-
կատարած աղօթեսցէ ՚ի ծածուկ ։

Տ՟ր

Տէր զօրութեանց և արարիչ ամ(ենայն) լինելութեանց: Որ յանէութենէ զբնաւս 'ի գոյացութիւն ածեալ գոյացուցեր: Որ և զմեզ զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս: Սպասաւորս ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դու տէր՝ որում պատարագեմք զպատարագս ընկալ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս, և աւարտեա՛ զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ. դեղ թողութեան մեղաց պարգևեալ ճաշակողացս զհացս զայս և զբաժակս:

'ի Ձայն.

Շնորհօք և մարդասիրութեամբ տն մերոյ և փրկչին յի քի · ընդ որում քեզ հօր միանգամայն և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխան″:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ Աստուծոյ երկիրպագեսցուք.

Դպ Առաջի քո տէր.

Սրկ Ողջոյն տուք միմեանց 'ի համ″.

Դպ Քս 'ի մէջ մեր յայտնե″.

Եւ համբուրեն զսեղանն և զմիմեանս. և սարկաւագն ձայնեսցէ :

Ահիւ կացցուք երկիւղիւ կաց″.

Դպ Առ քեզ աստուած.

Սրկ Պատարագ քն մատ″.

Դպ Ողորմութիւն և խաղաղու″.

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ 'ի Ձայն.

Շնորհք, սէր և ածային սրբարար զօրութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբ:

Եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան :

Դպ

Դպ. Ամէն և ընդ հոգւոյդ քում.

Սրկ. Զդրունս զդրունս ամե".

Դպ. Ունիմք առ քեզ Տէր ամենակալ.

Սրկ. Եւ գոհացարուք.

Դպ. Արժան և իրաւ.

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն ձեռնամած աղօթեսցէ ի ծածուկ։

Արժան է ստուգապէս և իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ։ Որ զքոյին անզննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զխափանս։ Նոր ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեփհականեցայ ընդհանրապացեալս ի քեզ։ Եւ զննելի բնութեամբ ըստ ի կուսէն մարմնաւորութեան՝ հաճեցաւ բնակել ի մեզ։ Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկինս արար։

Վասն զի որում ոչ հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ և յանմատոյց լուսոյ ածութեանդ։ Եղեալ անպարագիրդ մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս։

Ի Ձայն.

Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս. և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին և ասել։

Դպիրքն.

Սուրբ սուրբ սուրբ Տէր զօրութեանց լի են երկինք և երկիր փառօք քո օրհնու".

Մինչ

ի

Մինչ նոքա երգեն. Քահանայն բազկատարած ասասցէ ՚ի ծածուկ։

Սուրբ՝ սուրբ ես ճշմարտապէս եւ ամենասուրբ. եւ ո՞վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո՝ ՚ի մեզ զանբաւ բարեգործութե զեղմունս։ Որ եւ անդէն իսկ ՚ի նախախնամութեն զանկեալն ընդ մեզ զանազան եղանակօք՝ խնամեալ ախորժեցեր։ Մարգարէիւք, օրինացն տուչութբ, քահանայութեամբ, եւ ըստուերակերպ երինջոյն մատուցմամբ։

Իսկ ՚ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց լուծեալ զդատակնիքս։ Տուեր մեզ զորդին քո միածին, պարտապան եւ պարտս. զենումն եւ օծեալ. գառն եւ երկնաւոր հաց. քահանայապետ եւ պատարագ։

Օ

Վասն զի ինքն է բաշխօղ. եւ նոյն ինքն բաշխի ՚ի միջի մերում միշտ անծախապէս։

Վասն զի եղեւ հաւաստեաւ եւ առանց ցնորից մարդ. եւ անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յածածնէն եւ ՚ի սբ կուսէն մարիամայ։

Ճանապարհորդեաց ընդ ամ կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց։ Եւ յաշխարհակեցոյն՝ եւ առիթն փրկութեան մերոյ՝ եկեալ կամաւ ՚ի խաչ։

Առեալ զհացն՝ ՚ի սուրբ յածային՝ յանմահ՝ յանարատ՝ եւ յարարչագործ՝ ՚ի ձեռս իւր. օրհնեաց՝ գոհացաւ՝ եբեկ՝ եւ ետ իւրոց ընտրեալ սուրբ եւ բազմեալ աշակերտացն ասելով։

Առէք

'ի Ձայն։

Առէ՛ք Կերէ՛ք Այս է՛ ՄԱՐՄԻՆ ԻՄ՟ որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

'Ի ծածուկ։

Նոյնպէս և զբաժակն առեալ. Օրհնեա՛ց՝ գոհացաւ՝ էարբ՝ և ետ իւրոց ընտրեալ ս՟բ և բազմեալ աշակերտացն ասելով։

'ի Ձայն։

Արբէ՛ք 'ի սմանէ Ամենեքեան. Այս է՛ ԱՐԻՒՆ ԻՄ՟ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

'Ի ծածուկ։

Եւ զայն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Տ

եա

որդիդ քո միածին։ Եւ իջեալ 'ի ստորինս, վայրս մահու մարմնովն՝ զոր 'ի մեր մէս ընկալաւ յազգակցութէ։ Եւ զնիգս դժոխոցն ապարանեալ հզօրեղապէս։ Զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ ա՟ծ՝ զա՟ծդ կենդանեաց և մեռելոց։

Եւ ասեն. Օրհնեալն 'ի ձեռն
Եւ ասասցէ 'ի ծածուկ.

Եւ արդ մեք Տէր՝ ըստ այսմ հրամանատուութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ։ Յիշեմք զդորա որ վ՟ն մեր զփրկագործ չարչարանսն։ Զկենդանատու խաչելութիւն։ Զերեքօրեայ թաղումն։ Զերանելի յարութին։ Զա՟ծային համբարձումն։ Զնստելն ը՟ն աջմէ քո Հայր Զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք։

ԻԲ

Աստ զընծայսն տակաւ ինչ բարձրացուցեալ մատուցանէ առ հայր։
Աստ դիցէ 'ի վերայ սրբոյ սեղանոյն ասելով 'ի Ձայն։

Զքոյս՝ 'ի քոյոց՝ քեզ մատուցանեմք ըստ ամի և յաղագս ամենեցուն։

Դպ. Յամի օրհնեալ ես տր.

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն բազ կատարած ասասցէ 'ի ծածուկ։

Զքեզ արդարև տր ած մեր գովեմք. և զքեզ գոհանամք հանապազ։ Որ զանց արարեր զմերով անարժանութբս. այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւոր։ Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեց, յորոց յոյժ թափուր եմք և միշտ ունայն գտանիմք հանապազ։ Այլ 'ի քո բազմազեղ ներողութեցանդ ապաւինեալ համարձակիմք մերձենալ 'ի սպասաւորութի մարմնոյ և արեան միածնի քոյ տն մերոյ և փրկչին յի քի. որում վայելէ փառք իշ։

'ի Ձայն։

Խաղաղութի ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք.

Դպ. Առաջի քո տէր։

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն խոնարհեալ երկիրպագէ սեղանոյն և ասասցէ։

Երկիրպագանեմք՝ և աղաչեմք՝ և խնդրեմք՝ 'ի քէն բարերար ած։ Առաքեա 'ի մեզ և յառաջի եդեալ ընծայս այս՝ զմշտնջենաւորակից քո' և զէակից սբ հոգիդ։

Դպ. Որդի այ որ պատարագ".

Աստ կացեալ սարկաւագն առ ընթեր քահանային երկիւղիւ և դողութբ մեծաւ։
Աստ ասասցէ 'ի ցած Ամէն օրհնեա տր։
Աստ քահանայն խաչակնքեսցէ զընծայսն ասելով 'ի ծածուկ։



ՐՈՎ Զ հացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես տն մերոյ և փրկչին յի քի։

Որով զհայս օրհնեա՛ մարմին ճշմարտապէս առընկալցես տն մերոյ եւ փրկչին յի քի։

Որով զհայս օրհնեա՛ մարմին ճշմարտապէս առընկալցես տն մերոյ եւ փրկչին յի քի։

Եւ՛ զբաժակս օրհնեա՛ արիւն ստուգապէս առընկալցես տն մերոյ եւ փրկչին յի քի։

Եւ՛ զբաժակս օրհնեա՛ արիւն ստուգապէս առընկալցես տն մերոյ եւ փրկչին յի քի։

Եւ՛ զբաժակս օրհնեա՛ արիւն ստուգապէս առընկալցես տն մերոյ եւ փրկչին յի քի։

Որով զհայս եւ զգինիս օրհնեա՛ մարմին եւ արիւն ճշմարտապէս առընկալցես տն մերոյ եւ փրկչին յի քի փոխարկելով հոգւովդ քով սրբով։

Երեցն կրկնեսցէ։



Ապա ասասցէ ՚ի ձայն։

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութիւն ՚ի քաւութիւն եւ ՚ի թողութիւն մեղաց։

Եւ քահանայն այսուհետեւ ոչ բարձրագոյն քան զնծայսն զձեռսն իւր տարածեալ, այլ՝ խոնարհագոյն։ Եւ զաչսն ՚ի նոյն յառեալ աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Սովա՛ շնորհեա՛ զսէր ըզհաստատութիւն եւ զցանկալի ըզխաղաղութիւն ամենայն աշխարհի։ Սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց։ Քահանայից։ Սարկաւագաց։ Թագաւորաց։ Աշխարհի։ Իշխանաց։ Ժողովրդոց։ Ճանապարհորդելոց։ Նաւելոց։ Կապելոց։ Վտանգելոց։ Աշխատելոց։ Եւ որք ՚ի պատերազմունս բարբարոսաց։ Սովա՛ եւ օդոց շնորհեա՛ ըզբարեխառնութիւն. եւ անդոց զպտղաբերութիւն։ Եւ ախտացելոց՝ ՚ի պէսպէս ցաւս՝

փու

իդ
փութասցես զառողջութիւն:
Սովաւ հանգո՛ զամենե-
սեան յառաջագոյն 'ի քո
զննջեցեալսն:

Զնախահարս:
Զհայրապետս:
Զմարգարէս:
Զառաքեալս:
Զվկայեալս:
Զեպիսկոպոսունս:
Զերիցունս:
Զսարկաւագունս:

Եւ զընծայ ուխտ եկեղե-
ցւոյ քո սրբոյ: Եւ զամե-
նեսեան յաշխարհական
կարգէ զարս և զկանայս
հաւատով վախճանեալս:

'ի Ձայն.

Ընդ որս և մեզ այց ա-
րասցես բարերար ած
աղաչեմք:

Դպիրքն.

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛.

Քահանայն:

Ածածնին սրբոյ կուսին
մարիամու: Եւ յովհան-
նու մկրտչին: Ստեփան-
նոսի նախավկային:
Եւ ամ սրց եղիցի յի-
շատակ 'ի սբ պատարագս
աղաչեմք:

Դպիրքն.

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛.

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն
Ձեռնամած ասասցէ:

Առաքելոց սրբոց մարգարէից.

Եւ մինչ նորա երգեն զքարոզս քահա-
նայն ասասցէ զաղօթս զի 'ի միասին
աւարտեսցեն:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և օրհնեա՛ զսբ կաթուղի-
կէ և զառաքելական եկե-
ղեցի քո: Զոր փրկեցեր
պատուական արեամբ միած-
նի քո. և ազատեցեր խա-
չիւն սբվ: Շնորհեա՛ սմա
զանշարժ զխաղաղութիւն:
Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և օրհնեա՛ զամ ուղղա-
փառ եպիսկոպոսունս՝ որք
ուղիղ վարդապետութբ հա-
մառօտեն 'ի մեզ զբանն
ճշմարտութեան:

՚ի Ձայն․

Եւս առաքել զեպիսկո
պոսապետն մեր, և զպա
տուական հայրապետն ամ՛ հայոց
զՏէր (այս անուն) շնորհեսցես
մեզ ընդ երկայն աւուրս
ուղիղ վարդապետութբ։

Եւս դարձեալ սարկաւագն գայ ՚ի տեղի
իւր. Եւս քարոզեսցէ բարձր.

Գոհութիւն և փառաբանութիւն մա՛.

Մինչ նոքա քարոզեն Քահանայն ասաս
ցէ զաղօթս ՚ի ծածուկ.

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և օրհնեա՛ զքո՛ առաջի կա
ցեալ ժողովուրդս՝ և ըզ
պատարագս մատուցօղս։
Եւս պարգևեա սոցա ըզ
պիտոյսն և զօգտակարն։
Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և օրհնեա՛ զուխտաւորս
և զպտղաբերիչս Եկե-
ղեցւոյ քում սրբոյ. և որք
յիշեն զաղքատս ողորմա
ծութեամբ։
Եւս հատո՛ նոցա զվարձս
նոցա ըստ ընդաբոյս առա

Ր



տութե քում հարիւրապատիկ
աստ և ՚ի հանդերձելումդ։
Յիշեա՛ Տէր և ողորմեա՛,
և գթա՛ ՚ի հոգիս հանգու
ցելոյն։ Հանգո՛ զնոսա և
լուսաւորեա՝ և դասաւո
րեա՛ ընդ Սրբս քո՛ յար-
քայութեանդ երկնից.
և արժանի արա՛ ողորմու
թեան քում։
Յիշեա՛ Տէր և զհոգի ծա
ռայիս քոյ. (այս անուն). և
ողորմեա՛ նմա ըստ մեծի
ողորմութեան քում, և
հանգո՛ այցելութեամբ ՚ի
լոյս երեսաց քոց։
Եւս թէ կենդանի է՝
Փրկեա՛ զնա յամ՛ որոգայ
թից հոգւոյ և մարմնոյ։
Յիշեա՛ Տէր և զայնոսիկ
որք յանձնեցին մեզ յի
շատակել յաղօթս, զկեն
դանիս և զհանգուցեալս. և
կատարեա՛ զկամս հայց
մանց նոցա և զմեր, ընդ
ուղ

ուղղորդն և որ լի՛նէ փրր
կութեանք :
Տ՜ր վարձատրեա՛ բոլորե
ցունց պահանց և զերանե
լի բարութեամբ : Տ՜ր զը
տեալ զխորհուրդս մեր
սաձարացո՛ յընդունակու
թիւն մարմնոյ և արեան
միածնի քո տն մերոյ և
փրկչին յի քի·ընդ որում
քեզ հօր ամենակալի հան
դերձ կենդանարար և ա
զատիչ սբ հոգւովդ ·
վայելէ փառք եւ" :

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և
ասասցէ ՝ի Ձայն:

Տ՜ր եղիցի ողորմութիւն
մեծին այ և փրկչին մերոյ
յի քի, ընդ ձեզ ընդ
ամենեսեանդ :

Դպ Ա՜ն և ընդ հոգւոյդ քում.

Սրկ: Ա՜ն եւս խաղաղութեան զտէր ա".

Ամենայն սրբովք զորս
յիշատակեցաք եւս առա" :
Վ՜ն մատուցեալ սբ ե" :

Մինչ սարկաւագն քարոզէ՝ քահանայն
ասասցէ ՝ի ծածուկ.

Ա՜ծ շնորհատուէ և հայր
ողորմութե՟ գոհանամք ըզ
քէն: Որ ՝ի վեր քան զե
րանելի նահապետացն, ըզ
մեր պարտ՜որելոցս առա
ւել մեծարեցեր զընուի:
Վ՜ն զի նոցա ած կոչեցար.
իսկ մեզ՝ հայր հաճեցար
անուանիլ գթալով : Տ՜ր
այժմ տր աղաչեմք զքեզ զը
պայծառն առ ՝ի քէն զնո
րոգ և պատուական ան
ճանադրութեանս շնորհ:
Որըստ օրէ պայծառա
ցուցեալ ծաղկեցո՛ ՝ի մէջ
եկեղեցւոյ քում սրբոյ:

՝ի Ձայն:

Տ՜ր տուր մեզ համարձա
կաձայն բարբառով բա
նալ զբերանս մեր կարդալ
զքեզ երկնաւոր հայր,
երգել և ասել :

Տ՜ր

Եւ դպիրքն բազկատարած աղա-
կեսցեն։

Հայր մեր որ յերկինս ես մբ. եղի"։

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն աղօ-
թեսցէ ՚ի ծածուկ։

Տէր տէրանց ած՟ աստուածոց. Թգ՟ւոր յաւիտենական. արարիչ ամ՟ արարածոց, Հայր տն՟ մերոյ յի՟ քի՟։ Մի տար զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա ՚ի չարէ և ազատեա՛ ՚ի փորձութենէ։

՚ի Ձայն։

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն.

Աստուծոյ երկիրպագեսցուք.

Դպիրքն.

Առաջի քո տէր.

Սարկաւագն.

Օրհնեա տէր.

Քահանայն խոնարհեսցէ և ամ՟ ժողո-
վուրդն ընկեսցի ՚ի ծունկս։
Եւ Քահանայն աղօթեսցէ
՚ի ծածուկ։

Որ աղբիւրդ ես կենաց և բղխումն ողորմութե՟ հագիդ ած՟։ Ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիր պագանեն ածութե՟ քում։ Պահեա՛ զսոսա ամբողջս, տպաւորեա՛ յոգւոջ սոցա՛ զձև մարմնոյ ցուցակիս։ Զի ՚ի ժառանգութիւն և ՚ի վիճակ հանդերձելոց բարեաց։

՚ի Ձայն։

Քրիստոսիւ Յիսուսիւ տրամբ մերով. ընդ որում քեզ հոգւոյդ սբ՟յ և հօր ամենակալի վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և՟։

Եւ քահանայն առցէ զսուրբ հացն ՚ի ձեռն. Եւ սարկաւագն ձայնեսցէ բարձր։

Պրոսխումէ՛.

Իբ

Եւ քահանայն բարձրացուցանէ ակներև ամենայն ժողովրդեանն

Եւ ասասցէ ի ձայն.

# Ի Սրբութիւն Սրբոց:

Դպիրքն բարձր ձայնիւ,

Միա՛յն սբ, միա՛յն տր, յս քս.

Քահանայն:

## Օրհնեալ Հայր Սուրբ ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն,

Քահանայն,

## Օրհնեալ Որդին Սուրբ ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն,

Քահանայն,

## Օրհնեալ Հոգին Սուրբ ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն,

Քահանայն,

## Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբյ, Այժմ:

Դպիրքն: Ամէն:

## Հայր Սբ Որդին Սբ Հոգին Սբ Օրհ:

Ա

Եւ մինչ նոքա երգեն զայս, Քահանայն խոնարհեսցի և աղօթեսցէ ի ծածուկ:

Նայեա՛ց տէր մեր յս քս յերկնից ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ. եկ ի սրբել և ի կեցուցանել զմեզ: Որ ընդ հօր նստիս և աստ պատարագիս: Արժանի արա՛ տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ և ի պատուական արենէ. և ի ձեռն մեր ամ ժողովրդեանս:

Եւ զայս ասացեալ երկիրպագեսցէ և համբուրեսցէ զսեղանն:

Եւ առեալ զսուրբ Մարմինն ողջ թացցէ յանապական Արեանն և ասասցէ:

Տէր ած մեր որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քոյ քրիստոնեայս. և շնորհեցեր մեզ մկրտութ հոգևոր աւազանաւն ի թողութ մեղաց. և արժանի

նի արարեր զմեզ հաղոր-դել ս՟բ մարմնոյ և արեան միածնի քո։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տր՝ արա զմեզ արժանի ընդունել զս՟բ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն։ Եւ գոհութ՟բ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ս՟բ Հոգւոյդ այժմ և՛։

Եւ բարձրացուցեալ ակներև ժողովրդեանն և ասասցէ 'ի Ձայն։

Ի ս՟բ 'ի ս՟բ պատուական մարմնոյ և յարենէ տն մերոյ և փրկչին յի քի։ Ճաշակեսցուք սրբութ՟բ որ իջեալ 'ի յերկնից բաշխի 'ի միջի մերում։ Սա է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն, Եւ Թողութիւն մեղաց։ Սաղմոս ասացէք տն այ մե՛։ Սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի, որ նստի 'ի կառս քերովբէականս։

Եւ



Սարկաւագն ձայնեսցէ։

Սաղմոս ասացէք տեառն այ մերում։

Եւ Դպիրքն Եղանակեսցեն։

Ք՟ս պատարագեալ բաշխի 'ի մ՟ջ։

Մինչ նոքա երգեն, Քահանայն առցէ զՍուրբն 'ի ձեռն։ Եւ համբուրեսցէ Արտասուօք Ասելով։

Զո՞ր Օրհնութիւն, կամ զո՞ր Գոհութիւն 'ի վերայ Հացիս Եւ բաժակիս ասասցուք։ Այլ յս զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգւովդ այ՛։

Դպիրքն ասասցեն։

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես քրիստոս որդի այ, որ բարձեր զմեղս աշխարհի։

Եւ բեկեալ արկցէ 'ի բաժակն Արեան ասելով։

Լրումն Հոգւոյն Սրբոյ։

Եւ ապա Առեալ զմի մասն 'ի ձեռն, Ասասցէ արտասուօք և գոհութեամբ առ Հայր և Որդի 'ի ծածուկ։

Հայր

Լ

# ՀԱՅՐ ՍԲ

որ անուանեցեր զմեզ անուանակ-ցութեամբ միածնի քոյ: Եւ լուսաւորեցեր մկր-տութ՟ հոգեւոր աւազանին: Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութի՟. տպաւորեա 'ի մեզ զշնոր-հս հոգւոյդ սբյ, որպէս 'ի սուրբ առաքեալսն որք ճաշակեցին եւ եղեն մաքրիչք ամենայն աշխարհի: Եւ արդ՝ տր հայր բարե-րար, զհաղորդութի՟ս զայս նմանաւորեա ճաշակմանն երեկոյին աշակերտացն, բառնալով զխաւար մե-ղաց. մի՛ հայեր յանարժա-նութի՟ս իմ. եւ մի՛ արգելցես զշնորհս հոգւոյդ սբյ: Ըստ անբաւ մարդա-սիրութ՟ քում, պարգեւեա զսա քաւիչ մեղաց, լու-ծիչ յանցանաց: Որպ՟ խոստացաւ եւ ասաց տրն մեր յս՟ քս՟ թէ՝ տամ որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զա-րիւն իմ, կեցցէ 'ի յաւի-տեան: Արդ՝ արա զսա մեզ 'ի քաւութի՟ւն որք կե-րիցեն եւ արբցեն 'ի սմա-նէ, հանիցեն զօրհնութի՟ եւ զփառս Հօր եւ Որդ-ւոյդ եւ Հոգւոյդ սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւէ՟:

Խաղաղութիւն ամենեցուն:

Գոհանամ զքէն քս՟ թա-գաւոր, որ արժանի արա-րեր զանարժանս հաղոր-դել սբ՟ մարմնոյ եւ արեան քոյ: Եւ այժմ աղաչեմ զքեզ մի՛ լիցի սա ինձ 'ի դատապարտութիւն, այլ 'ի քաւութիւն եւ 'ի թո-ղութիւն մեղաց. առող-ջութիւն հոգւոյ եւ մարմ-նոյ. եւ 'ի կատարումն ամ՟

գոր

գործոց առաքինութեան։ Որպէս զի սրբեսցէ սա՛ զշունչս իմ. և զհոգի և զմարմին իմ։ Եւ արաս-ցէ զիս տաճար և բնակա-րան ամենայնի երրորդու-թեանդ։ Զի ընդ սբս քո՛ արժանի եղէց փառա-ւորել զքեզ ընդ Հօր և ընդ սբ Հոգւոյդ այժմ։

### Յօհաննու Ոսկեբերանին Ասացեալ Աղօթք։

Գոհանամ և մեծացու-ցանեմ և փառաւորեմ ըզ-քեզ Տր Ած իմ, զի զիս զանարժանս արժանացու-ցեր յաւուր յայսմիկ հա-ղորդակից լինել Ածային և սոսկալի խորհրդոյ քում. անարատ մարմնոյդ և պատուական արեանդ. Վն այսորիկ զսոսա՛ ՚ի բարեխօ-սութիւն ունելով, աղաչեմ յամ աւուրս և ՚ի ժամա-նակս կենաց իմոց ընդ

Լա

սրբութեան քոյ պահեա՛ զիս։ Ոպ զի յիշելով զբարե-գործութիւնս քո՛ և կենդանի եղէց ընդ քեզ։ Որ վն մեր չարչարեցար և մեռար և յարեար. մի՛ մերժեսցի Տր իմ և Ած խորտակեցի, կնքելով անձին իմոյ պատ-ուական Արեամբդ քով։ Ա՛մենակալող մաքրեա՛ զիս սուրբ յամենայն մե-ռելոտի գործոց իմոյ, որ միայնդ ես անմեղ։ Ամրացո՛ զկեանս իմ Տր, յամ փորձութենէ. և զպա-տերազմօղն իմ դարձո՛ յի-նէն յետս, պատկառեալ և ամաչեցեալ որչափ յառ-նէ ՚ի վր իմ։ Ամրացո՛ զգնացս մտաց և լեզուի իմոյ, և զամ ճանապարհս մարմնոյ իմոյ։ Լե՛ր հանա-պազորդ ընդ իս, ըստ ան-սուտ խոստմանց քոյ, թէ որ ուտէ զմարմին իմ և

և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի և ես 'ի նմա։ Դու ասացեր մեր դաստիարակացո՛ զբանս ած̄ային անլուծանելի Հրամանաց քոց։ Քանզի դու ես աստուած սրբութեան, և գթութեան և մարդասիրութե̄ և պարգևիչ ամենայն բարեաց. և քեզ վայելէ փառք համդերձ Հարբդ և ամենասուրբ Հոգւովդ այժմ և միշտ"։

Եւ ապա տեառնագրեսցէ զինքն. և խնդրեսցէ 'ի Ճշմարտէն այ̄ զպէտս պէտս հայցուածս անձին իւրոյ. և ժողովրդեան, և աշխարհի. և թողութիւն խնդրեսցէ իւրոց յանցաւորացն. թշնամեացն և ատելեացն։ Եւ անդէն ահիւ և դողութեամբ ճաշակեսցէ 'ի մարմնոյն. և արբցէ 'ի բաժակէն ասելով։

Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ 'ի Հայր և յորդի և 'ի Հոգիդ սբ։ Հաւատով ճաշակեմ զսբ և զկենդանարար և զփրկարար Մարմինս քո քս̄ ած̄ իմ յս̄ 'ի թողութիւն մեղաց իմոց։ Հաւատով ըմպեմ զսրբ բարար և զմաքրիչ արիւնս քո քս̄ ած̄ իմ յս̄ 'ի թողութիւն մեղաց իմոց։ Մարմին քո անապական լիցի ինձ 'ի կեանս։ Եւ սբ արիւն քո 'ի քաւուն և 'ի թողութիւն մեղաց։

Ապա սարկաւագն հաղորդեսցի. և յետ հաղորդելոյն գոչէ առ ժողովուրդն և ասէ բարձր։

Երկիւղիւ և հաւատով յառաջ մա"։

Եւ Դպիրքն Բարձր ձայնիւ։

Աստուած մեր և տէր մեր երևե"։

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն բայց ոչ 'ի բեմանն, այլ յաւելին տալով զսրբութիւնն. և ամենայն արժանաւորքն հաղորդեսցին. և յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն ընծայիւն և ասասցէ։

Կեցո՛ Տէր զժողովուրդս քո՛ և օրհնեա՛ զժառանգութիւնս քո. հովուեա՛ և բարձրացո՛ զսոսա յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Եւ Դպիրքն Երգեսցեն։

Լցաք 'ի բարութեանց քոց տէր Ճա"։

Գոհանամք զքեն հայր ամենակալ որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ զսբ զեկեղեցի, տաճար սրբութեան ուր փառաբանի անուն սբ Երրորդութեան:

Ալէլուիայ:

Գոհանամք զքեն Քրիստոս Թագաւոր՝ որ պարգեւեցեր մեզ կենդանութի կենարար մարմնով եւ արեամբ քով սրբով: Շնորհեա՛ զքաւութիւն եւ զմեծ ողորմութիւն:

Ալէլուիայ:

Գոհանամք զքեն Հոգիդ ճշմարիտ՝ որ նորոգեցեր զսբ զեկեղեցի: Անարատ պահեա՛ հաւատով Երրորդութեանդ յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Ալէլուիայ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զտէր աղ.
Եւ եւս հաւատով ընկալեալք ածս".
Դպ. Գոհանամք զքեն տէր որ կե".

Ի





Գոհանամք զքեն քս ած մեր որ զայսպիսի ճաշակս բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան: Սովիմբ պահեա զմեզ սբս եւ անարատս, բնակեալ զմեօք քո ածային խնամօքդ: Արածեա՛ զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց եւ բարերարաց: Որով ամրացեալ յամենայն բանսարկուին ընդդիմութեանց, զքում եւ եթ արժանի եղիցուք լսել ձայնի: Եւ քեզ միայնոյ քաջայաղթ եւ ճշմարիտ հովուիդ հետեւիլ: Եւ առ ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից: Ած մեր եւ տէր մեր եւ փրկիչ յս քս: Որ ես օրհնեալ ընդ հօր եւ ընդ սբ հոգւոյդ այժմ եւ":

Խաղաղութիւն ամենեցուն.

Անքննելին, անհաս, եր- րեակ ինքնութեամբ, հաւ- ատից, ընդունող, և անքն- ժամելի, միաստուածական սը- երրորդութեան, վայելէ փառք իշխանութեան և"։

Աստ ասա ասացէ զամենապատիւ սուրբ 'ի ձեռն իւր։ Աստ երիցս երկրպագեալ համբուրեսցէ զՍբ սեղանն։ Աստ դարձեալ 'ի մէջ եկեղեցւոյն ասասցէ զաղօթս 'ի Ձայն։

Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ Տր՝ և սր- բես զյուսացեալս 'ի քեզ. կեցո զժողովուրդս քո և օրհնեա զժառան- գութիւն քո ։ Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա ։ Սրբեա զսոսա որք սիրեն զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փա- ռաւորեա Աստուածային զօրու- թեամբ քով. և մի թողուր զյուսացեալս 'ի քեզ ։ Զխաղաղութիւն պարգևեա ամ աշխարհի ։

Եկեղեցեաց, քահանայից թագաւորաց, քրիստո- նէից և զինուորեալ ման- կանց նոցա. և ամ ժողովրդ- եանս ։ Զի ամ տուրք բարիք. և ամ պարգևք կատարեալք, 'ի վերուստ են իջեալք առ 'ի քէն ։ Որ ես հայր լուսոյ և քեզ վայելէ փառք իշխան"։

Աստ Դպիրքն Սաղմոսեն Նոյնս։

Եղիցի անուն տեառն օրհնեալ։

Աստ քահանայն դարձցի առ ժողովուրդն և ասասցէ 'ի Ձայն։

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես քրիս- տոս Աստուած փրկիչ մեր ։ Որ լցեր զամ հայրական տնօրէնութիւնս քո ։ Լից և զմեզ հոգւովդ քով սրբով ։

Սարկաւագն Օրհնեա.

Քհ Խաղաղութիւն ամե"։

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ Երկիրպագութիւն լուսաւորչ.

Սուրբ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Յովհաննու
Կիւրակէ Աւագին․ Համար մէկ․

Ի Հօրէ լ[illegible]

ԻՍԿԶԲԱՆԷ ԷՐ բանն․ եւ բանն էր առ ած․ եւ ած էր բանն։ Նա էր ՚ի սկզբանէ առ ած։ Ամենայն ինչ նովաւ եղեւ եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ եղեւն։ Նովաւ կեանք էր․ եւ կեանքն էր լոյս մարդկան։ Եւ լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ․ եւ խաւար նմա ոչ եղեւ հաս։ Եղեւ այր մի առաքեալ յայ՝ անուն նմա յօհաննէս։ Սա եկն ՚ի վկայութիւն զի վկայեսցէ վն լուսոյն․ զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ոչ էր նա լոյսն այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։ Էր լոյսն ճշմարիտ որ լուսաւորէ զամ մարդ որ գալոց է յաշխարհ։ Յաշխարհի էր․ եւ աշխարհ նովաւ եղեւ․ եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն

լի

եւ իւրքն զ[illegible] ընկալան։ Իսկ որք ընկալանն զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս այ լինել․ որոց հաւատային յանուն նր։ Որք ոչ յարենէ․ եւ ոչ ՚ի կամաց մարմնոյ եւ ոչ ՚ի կամաց առն այլ յայ ծնան։ Եւ բանն ՄԱՐՄԻՆ եղեւ եւ բնակեաց ՚ի մեզ։ Եւ տեսաք զփառս նր՝ զփառս իբրեւ զմիածնի առ ՚ի հօրէ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ։

Սղմ Սբ խաչիւս աղաչեսցուք զտէր․

Քհ Պահպանեա՛ զմեզ քս։

Սղմ Օրհնեցից զտէր յամ ժամ․

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն եւ ասասցէ բարձր․

Օրհնեալ եղերուք ՚ի՛։

Եւ դպիրքն ասասցեն․

Ի տէր պահպանեսցէ անձն իմ․

Եւ ընդ ասպմունքն դպրաց բաշխեսցի նշխար։ Եւ յաւարտմանն Քահանայն դարձցի յարեւելս Եւ երկրպագեսցէ [illegible] Քի [illegible] տեղանոյն երիցս եւ ասասցէ․

Տէր յս ած ողորմեա՛ ինձ։

Եւ մտեալ յաւանդատունն մերկասցի ՚ի զգեստուցն։ Եւ երթիցէ խաղաղութբ․

## Յիշատակարան Սրբոյ Մատենիս։

Շնորհիւ Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. աւարտեցաւ որ գիրքս այս՝ որ կոչի ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ։ որով ՚ի ձեռն Սրբոց քահանայից՝ կատարի Աստուածայինն խորհուրդ։

Տպագրեցեալ ՚ի Հայրապետութեան լուսաւոր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսին ամենայն Հայոց։

Եւ ՚ի Պատրիարգութեան Առաքելական Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի Տեառն Յովհաննու գերերջանիկ Պատրիարգի։

Եւ ՚ի Պատրիարգութեան մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տեառն Զաքարիա Աստուածաբան Պատրիարգի։ որոյ հրամանաւն տպեցաւ Աստուածայինս այս մատեան։

Արդ՝ որովհետև Աստուածային մատենիս այսորիկ առաջին տպագրեցեալքն էին մոռացեալք և սպառեալք. վասն այսր ջերմեռանդն ՚ի սէր սոյն տպատարագին՝ վերոյ գրեալ երջանիկ հայրս մեր Յովհաննէս Սրբազան Պատրիարգն՝ գերահռչակ Աթոռոյն Սրբոյ Երուսաղէմի [illegible] յօժարամիտ և նորակերտ տառիւք. որոյ՝ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և հոգւոյ և մարմնոյ ծնողացն և ամ զարմիցն և իւրն [illegible] և [illegible] եղիցի ՚ի շնորհաց սոյն տպատարագին։ Նաև՝ դուք Սրբազնագոյն պատարագամատոյցք որք վայելէք զգեղեցկատիպ սոյն մատեանս, յիշեսջիք ՚ի խորհուրդ Սրբազնական պատարագին. զայսպէս՝ Պատրիարգ հայրն մեր սոյն Սաղիմայ. և յիշատակօղքդ՝ յիշեալ լիջիք ՚ի Քրիստոս Աստուծոյ մերմէ.

Արդ և՝ յիշեսջիք զվարպետան տպագրատանս՝ զՏէրտէր Յօհաննէսն, և զորդի նորին զՏէրտէր Պօղոսն, որ է կերտօղ նորաշէն տառիցս. և զ[illegible] որդին զպարոն Տիրացու Յարութիւնն. և զհամայն կենդանիսն և զննջեցեալսն։

Եւ զաշխատօղսն գործարանիս զգրաշարն [illegible] Զաքարն՝ և [illegible] Տիրացու Յօհաննէսն. և դուք յիշեալ լէ՛ր։